



ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԺԱՆԱՊԱՐՀԻՆ

Թադէոս եւ Ռարթողիմեոս առաքյալների ցանած սերմերը անպտուղ
չմնացին, այլ՝ իմաստավորված իրենց իսկ՝ առաքյալների հեղված արշամբ,
պարարտ հող գտան ու ծխրծակեցին։ Եվ ծնվեց Եկեղեցին հայկական,
հասակ առավ, արմատակալեց Ա. Գրիգոր Լուսավորչի քարոզչությամբ, հա-
սակ նետեց ու ամրացավ Ա. Ներսես Մեծով եւ, վերջապէս, տվեց իր անդ-
րանիկ քաղցրահամ պտուղները Սահակ-Մեսրոպով ու մեր թարգմանիչ
վարդապետներով։ Դարեր եկան ու դարեր անցան, վայրագ հողմերն ու
չարագուշակ բախտի քմահաճութեքները բազմիցս լապտոնացին արմատախիւ
անել մեր սուրբ Եկեղեցին, հայոց ինքնության ծառը, բայց իզուր։ Երբ
չար են եղել ժամանակները, նա կուշ է եկել, քարացել ու ամրացել է, որ-
պէսզէն ոչ մի քամի չկարողանա արմատախիւ անել իրեն։ Ծիշտ է, ջարդվել
են ճյուղերը, կորել պտուղները, բայց միշտ ամուր են մնացել արմատներն
ու բունը։ Իսկ երբ դարձյալ արևն է շողացել Հայոց երկնակամարում, ծաղ-
կել են ճյուղերը, դարձյալ պտղաբերել հանձին Նարեկացու ու Ընորհալու,

հանձին մեր միջնադարյան համալսարանների ու դպրության անմար օջախների:

Այսօր, երբ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ անգամ հոգևոր փորձության նոր օրեր ենք ապրում հայրենիքի մեջ, ասպարեզ են իջել բազմաթիվ աղանդավորական շարժումներ քրիստոնեականի անվան տակ՝ անհարազատ մեր դավանանքին ու մեր Եկեղեցուն: Ասպարեզ են իջել անգամ հնդկական աղանդներ: Այս բոլոր ազգադավ հոսանքների ետև վստահ ենք, որ օտար ուժեր են կանգնած: Դրանք եկել են խաթարելու մեր ժողովրդի հոգևոր միությունը՝ օգտվելով հանրապետությունում ստեղծված անհաստատ վիճակից: Աստված մի արասցե, որ պատմական այս բախտորոշ ժամանակներում խաթարվի մեր ժողովրդի հոգևոր միասնականությունը, որ մեր ժողովուրդը, երբեմն առանց գիտակցության, երբեմն խաբվելով կամ հավատալով օտարամուտ գաղափարախոսների սադրանքներին, թողնեն իրենց պապենական հավատն ու հայրենի Մայր Եկեղեցին և հետևեն այդ անկոչ մունետիկներին: Դրանք ոչ թե Քրիստոսի ծառայողներ են, այլ Ավետարանի վաշխառուներ: Հայ ժողովուրդը մեկ է և մեկ է իր Եկեղեցին: Թե՛ կաթոլիկները և թե՛ բոլոր տեսակի բողոքական եկեղեցիները մեր ժողովրդի պատմության մեջ պետք է դիտվեն միայն ու միայն իբրև անցողիկ երևույթներ՝ արդյունք պատմական խառն ու աննպաստ ժամանակների: Այս պատմական ճշմարտությունը պետք է լավ հասկանան թե՛ մեր ժողովուրդը և թե՛ մեր կաթոլիկ ու բողոքական եղբայրներն ու քույրերը:

Այսօր էլ մեր Եկեղեցին, իր կոչման և նվիրումի գիտակցության վրա, Քրիստոսի անունով կոչ է անում իր բոլոր զավակներին. «Եկաք առ իս և ես հանգուցից զձեզ»: Գործունեության նոր դաշտ ու նոր ձևեր են բացվել մեր հոգևորականության առջև: Եթե անցնող տարիներին շատերի շուրթերից վերացան «Հայր Մեր»-ն ու մեր հոգեպարար աղոթքները, փակված էին մեր սուրբ տաճարները, Հայաստանի բազմաթիվ շրջաններ չունեին իրենց աղոթքի տները, ապա այսօր հոգեկան նոր վերելք է սկսվել մեր ժողովրդի մեջ: Ամենուր բացվում են նորանոր եկեղեցիներ, կառուցվում են նորերը, թե՛ հայրենիքում և թե՛ ներքին սփյուռքում: Ստեղծված այս նոր կացության առջև այլևս հոգևորականության թիվը չի բավարարում մեր հավատացյալների պահանջին: Թե՛ բարձրագույն հաստատությունները և թե՛ միջնակարգ դպրոցները ցանկություն են հայտնում իրենց ուսումնական ծրագրերում ընդգրկել կրոնի ուսուցումը:

Հայ Եկեղեցին այսօր կանգնած է շարունակելու իր պատմական առաքելությունն ու քարոզչությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանը իր 3 նոյեմբեր 1990 թ. հաղորդագրությամբ հաստատեց Քրիստոնեական Քարոզչության Կենտրոն, որ կոչված է կազմակերպելու և ծավալելու Հայաստանյայց Եկեղեցու կրոնական քարոզչության և դասընթացքների գործունեության ծրագիրը Հայաստանի տարբեր շրջաններում, դպրոցական ու կրթական հաստատություններում: Իբրև ամենահրատապ պահանջ, Երևանի Ս. Սարգիս եկեղեցու առաջնորդարանում սկսվեցին կրոնական դասընթացքներ, որին մասնակցում են միջնակարգ դպրոցների շուրջ 200 ուսուցիչներ: Դասավանդությունների նպատակն է հնարավորությունների չափ ամենակարճ ժամանակահատվածում պատրաստել բավարար թվով ուսուցիչներ՝ միջնակարգ դպրոցներում կրոն դասավանդելու համար:

Սույն կենտրոնը իր առջև նպատակ է դրել նաև այլ ծրագրեր: Դրանք են Երևանի և շրջակայքի եկեղեցիներին կից կիրակնօրյա դպրոցների կազմակերպում, Հայ Եկեղեցու պատմության, դավանանքի, եկեղեցական արարողությունների, քրիստոնեության հարակից հարցերի և Աստվածաշնչի վերաբերյալ հոդվածների ու ուսումնասիրությունների հրապարակում մամուլում, ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ, կրոնական դասագրքերի և Մանկական Աստվածաշնչի տեքստերի պատրաստում:

Մնում է հուսալ, որ Քարոզչական կենտրոնը, որին լծված են Մայր Աթոռի մի խումբ երիտասարդ միաբաններ, գիտակից իրենց նվիրումին ու առաքելության կարևորությանը, հաջողությամբ կկարողանան իրագործել իրենց վրա դրված պարտականությունները: Այս աշխատանքին պետք է գործակցեն բոլորը, թե՛ թեմակալ առաջնորդները, թե՛ ողջ հոգևոր դասը, տարբեր վանքերն ու եկեղեցիները, և ինչու չէ, մեր պետական իշխանություններն ու ողջ ժողովուրդը: Ժողովրդի կրոնական դաստիարակության գործը, ժողովրդին դեպի իր պապեցական հավատքին բերելու միտումը համաժողովրդական գործ է, ո՛ղջ ազգի պարտականությունն է: Հեռո՛ւ մեզանից բոլոր տեսակի օտարամուտ հոսանքներն ու ներմուծյալ գաղափարները: «Ես եմ ճանապարհ, ճշմարտություն եմ կեանք»,—ասում է Փրկիչը մեր Քրիստոս: Նույնն է ասում նաև մեր Եկեղեցին:

